TELCELL

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(2026 թվականի հունիսի 25-ի «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի հաշվիչ հանձնաժողովի նիստի)

ք. Երևան 26 հունիսի 2026 թվական

Հաշվիչ հանձնաժողովի անդամներ՝

1. Կորպորատիվ քարտուղար Լյուդմիլա Ղազարյան,
2. Իրավաբան Վարդուհի Ֆարմանյան,
3. Համապատասխանության ապահովման, ռիսկերի և ներքին դիտարկումների բաժնի ղեկավար Անդրանիկ Բարոյան,
4. Որակի վերահսկման բաժնի ղեկավար Սոնա Վարոսյան:

Քվորումի հաշվարկ Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի - 2026 թվականի հունիսի 25-ի

Տեղաբաշխված և քվեարկող բաժնետոմսերի ընդհանուր քանակ	34,870,000		100 %
	Բաժնետերերի քանակ	Բաժնետոմսերի քանակ (հատ)	Բաժնետոմսերի քանակ (տոկոս)
Լրացված քվեաթերթիկը ուղարկելու ձևով քվեարկած բաժնետերեր	6	1,513,000	4.34%
Ժողովին գրանցած բաժնետերեր	51	31,166,492	89.38%

Ընդամենը ժողովին մասնակցել են	57	32,679,492	93.72%
Քվորումն ապահովված է:			

1. Օրակարգի 1-ին հարցի կապակցությամբ քվեարկության արդյունքների ամփոփում.

Հարց 1. «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ի 2025 թվականի տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին

Որոշման նախագիծը.

Հաստատել «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ի 2025 թվականի տարեկան հաշվետվությունը:

Կողմ՝ 32,679,452 բաժնետոմս (99,99988%)
Դեմ՝ 40 բաժնետոմս (0,00012%)
Ձեռնպահ՝ 0 բաժնետոմս (0,00000%)

Որոշումը ընդունվել է:

Կանոնադրության 8.5 կետի համաձայն՝ *Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցող ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ, բացի 8.7 կետում սահմանված դեպքերից:*

---

2. Օրակարգի 2-րդ հարցի կապակցությամբ քվեարկության արդյունքների ամփոփում.

Հարց 2. «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ի արտաքին աուդիտի կողմից հաստատված 2025թ. ֆինանսական հաշվետվությունները հաստատելու մասին

Որոշման նախագիծը.

Հաստատել արտաքին աուդիտի եզրակացությամբ Ընկերության 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտվող ֆինանսական տարվա համախմբված ֆինանսական հաշվետվությունները:

Կողմ՝ 32,679,452 բաժնետոմս (99,99988%)
Դեմ՝ 40 բաժնետոմս (0,00012%)
Ձեռնպահ՝ 0 բաժնետոմս (0,00000%)

Որոշումը ընդունվել է:

Կանոնադրության 8.5 կետի համաձայն՝ *Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցող ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ, բացի 8.7 կետում սահմանված դեպքերից:*

---

3. Օրակարգի 3-րդ հարցի կապակցությամբ քվեարկության արդյունքների ամփոփում.

Հարց 3. «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ի 2025թ. տարեկան շահույթը բաշխելու մասին

Որոշման նախագիծը.

1. «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ 31.12.2025 թ. դրությամբ տարեկան ֆինանսական հաշվետվություններում արտացոլված 992,170,000 (ինը հարյուր իննսուներկու միլիոն հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամի չափով տարեկան զուտ շահույթից վճարել ընդհանուր 767,140,000 (յոթ հարյուր վաթսունյոթ միլիոն հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ՝ որպես տարեկան շահութաբաժիններ, այն է՝ յուրաքանչյուր 1 բաժնետոմսի դիմաց՝ 22 (քսաներկու) ՀՀ դրամ:
2. Տարեկան շահութաբաժինների վճարումները կատարել առավելագույնը մինչև 25.07.2026 թ. ներառյալ, դրամական միանվագ փոխանցմամբ, «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակը կազմելու օրվա՝ 2026 թ. մայիսի 29-ի ժամը 18:30-ի դրությամբ Ընկերության մասնակիցների ռեեստրում ընդգրկված բաժնետերերին՝ կանոնադրական կապիտալում ունեցած մասնակցությանը համամասնորեն:
3. Շահութաբաժինները վճարելուց հետո մնացած շահույթը թողնել չբաշխված:

Կողմ՝ 32,679,492 բաժնետոմս (100%)
Դեմ՝ 0 բաժնետոմս (0%)
Ձեռնպահ՝ 0 բաժնետոմս (0%)

Որոշումը ընդունվել է:

Կանոնադրության 8.5 կետի համաձայն՝ *Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցող ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ, բացի 8.7 կետում սահմանված դեպքերից:*

---

4. Օրակարգի 4-րդ հարցի կապակցությամբ քվեարկության արդյունքների ամփոփում.

Հարց 4. 2026 թ. գովազդային վիճակախաղի՝ 20,000,000 ՀՀ դրամի չափով տարեկան շահումային հիմնադրամ ստեղծելու մասին

Որոշման նախագիծը.

Ստեղծել գովազդային վիճակախաղի տարեկան շահումային հիմնադրամ 20,000,000 ՀՀ դրամի չափով, որի օգտագործման կարգը որոշվում է Խորհրդի կողմից:

Կողմ՝ 32,083,941 բաժնետոմս (98,1776%)
Դեմ՝ 3175 բաժնետոմս (0,00972%)
Ձեռնպահ՝ 592376 բաժնետոմս (1,81268%)

Որոշումը ընդունվել է:

Կանոնադրության 8.5 կետի համաձայն՝ *Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցող ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ, բացի 8.7 կետում սահմանված դեպքերից:*

---

5. Օրակարգի 5-րդ հարցի կապակցությամբ քվեարկության արդյունքների ամփոփում.

Հարց 5. Կանոնադրության նոր խմբագրությունը հաստատելու մասին

Որոշման նախագիծը.

Հաստատել Ընկերության կանոնադրության նոր խմբագրությունը:

Կողմ՝ 32,679,392 քվեարկող բաժնետոմս (99.999%)
Դեմ՝ 0 քվեարկող բաժնետոմս (0.000%)
Ձեռնպահ՝ 100 քվեարկող բաժնետոմս (0.0003%)

Որոշումը ընդունվել է:

Կանոնադրության 10.1 կետի համաձայն՝ 10.1. Ընկերության կանոնադրության մեջ (...)Ընկերության նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատելը տեղի է ունենում բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ, որն ընդունվում է ժողովին մասնակցած քվեարկող բաժնետերերի ձայների 3/4-ով, իսկ կանոնադրական կապիտալի չափի մեծացման հետ կապված դեպքերում՝ ձայների մեծամասնությամբ:

Հաշվիչ հանձնաժողովը արձանագրությունը կազմելուց և այն ստորագրելուց անմիջապես հետո քվեաթերթիկները զմռսել և հանձնել է Ընկերության արխիվ պահպանության համար:

Հաշվիչ հանձնաժողովի անդամներ՝

Լ. Ղազարյան

Վ. Ֆարմանյան

Ա. Բարոյան

Ս. Վարոսյան